Ն.Գ. պրն Գագիկ Հարությունյանին
Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի նախագահ
Մ. Բաղրամյան պողոտա 10
Երևան 0019
Հայաստանի Հանրապետություն

2013 թվականի նոյեմբերի 11
Վիեննա, Ավստրիա

Մեծարգո պարոն ՆԱԽԱԳԱՀ,

Վերադառնալով Վիեննա՝ իմ և ավստրիական պատվիրակության անունից ինձ պատիվ է վերապահվել շնորհակալություն հայտնել՝ մեր պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում Ձեր ու ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերված ջերմ ընդունելության և շքեղ հյուրասիրության համար:

Ցանկանում եմ նշել, որ մենք անչափ տպավորված էինք այցի ամբողջ ծրագրով, մասնավորապես Ձեր դատարանում չափազանց հետաքրքիր քննարկումներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ հանդիպումով, ԵՊՀ կատարած մեր այցով, և իհարկե անչափ տպավորիչ մշակութային այցերով ու մեր տեղակայման գերազանց կազմակերպմամբ: Խնդրում եմ փոխանցել մեր երախտիքը Ձեր գործընկերներին և Ձեր աշխատակազմի բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր մեր այցը Երևան դարձրեցին անչափ հաճելի:

Սիրով կսպասեմ ՀՀ սահմանադրական դատարանի՝ Ձեր կողմից ղեկավարած պատվիրակությանը «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի» XVI կոնգրեսին, որը տեղի կունենա 2014 թվականի մայիսին Վիեննայում:

Օգտվելով հնարավորությունից՝ ցանկանում եմ վերահաստատել Ձեզ և Ձեր գործընկերներին ուղղված իմ հրավերը՝ այց կատարել Վիեննա՝ Ավստրիայի սահմանադրական դատարան՝ 2014 թվականի կոնգրեսից հետո:

Խորապես Ձերը,

Գերհարթ Հոլցինգեր

Ավստրիայի սահմանադրական դատարանի նախագահ